ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ԱՊՀ)

ԽՍՀՄ-ի էկոնոմիկան զարգանում էր որպես բարձր ինտեգրվող համալիր, որտեղ բոլոր օղակները շատ սերտ կապված էին միմյանց հետ, չնայած աշխատանքի ներխորհրդային բաժանումը ամենևին ոչ միշտ էր արդարացվում արտադրողական ուժերի զարգացման հայացակետով: Կազմավորված կապերի խզումը ԽՍՀՄ-ի կազմալուծման արդյունքում շատ ցավագին էր (ԱՊՀ անդամ-երկրներում ՀՆԱ-ի անկման 1/3-ը միջին գնահատականով՝ 1992-1995թթ. բաժին էր ընկնում այս կապերի կործանման հետևանքներին):

Անմիջապես Խորհրդային Միության կազմալուծումից հետո նախկին խորհրդային հանրապետությունների միջև ծագեցին ինտեգրացիոն միտումներ: Առաջին էտապում նրանք դրսևորվեցին, թեկուզև մասնակիորեն նախկին միասնական տնտեսական տարածությունը դեզինտեգրացիոն պրոցեսներից պաշտպանելու փորձերով: Այս փորձերը առաջին հերթին շոշափում էին այն ոլորտները, որտեղ կապերի դադարեցումը հատկապես անբարենպաստ ազդեցություն էր թողնում ժողովրդական տնտեսության վիճակի վրա (տրանսպորտ, կապ, էներգակիրների մատակարարում և այլն): Հետագայում, մոտավորապես 1996-1997թթ-ից, ուժեղացան նոր հիմքերով ինտեգրացիայի ձգտումները, հաշվի առնելով առկա ռեսուրսները:

Հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ը փլուզվեց առաջին հերթին ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով: 70-80-ական թվականներին ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ծագած Սպառազինությունների մրցավազքը բերեց ԽՍՀՄ բյուջեի և ֆինանսական միջոցների փոշիացմանը: Գանձարանը դատարկվեց: Պետք է նաև ավելացնել, որ 1991 թ-ի դեկտեմբերին, երբ որ ստորագրվում էր Բելովեժյեում (Բելոռուսիա) նորացված կազմով ԽՍՀՄ-ը վերանորոգելու համաձայնագիրը, այն հրաժարվեցին ստորագրել Ուկրաինայի ղեկավարները և, դրանով իսկ, խետք է արձանագրել, որ ԽՍՀՄ-ի վերջնական փլուզման աշխարհաքաղաքական պատճառը դա էր: Որոշ տեսաբանների գնահատմամբ Ուկրաինան հրաժարվեց մասնակցել ԽՍՀՄ-ի վերականգնմանը ԱՄՆ-ի թելադրանքի հետևանքով: ԱՊՀ երկրների

գործունեությունը առ այսօր այս կամ այն կերպ խոչնդոտվում է ՎՈՒԱՄ երկրների (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) ոչ կոնստրուկտիվ և «դավաճանողական» քաղաքականության հետևանքով: ԽՍՀՄ-ի տնտեսական տարածքի վերականգնումը և նրանում Հայաստանի տնտեսության ինտեգրացումը միակ և ամենաարդյունավետ ուղին է Հայաստանի համար: Այդ առումով արդեն որոշակի քայլեր են կատարվում ԱՊՀ երկրների շրջանակներում վերականգնելու ԽՍՀՄ տնտեսական ընդհանուր տարածությունը:

ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ինտեգրացիոն միտումները հետխորհրդային տարածությունում ծնվում են հետևյալ հիմնական գործոններով.

- Աշխատանքի բաժանումով, որն անհնար է կարճ ժամանակահատվածում ամբողջությամբ փոխել: Շատ դեպքերում դա ընդհանրապես աննպատակահարմար է, քանի որ աշխատանքի համակարգված բաժանումը նշանակալի աստիճանով համապատասխանում էր բնակլիմայական և պատմական զարգացման պայմաններին:
- ԱՊՀ-ի անդամ-երկրների բնակչության լայն զանգվածների ցանկությամբ, պահպանելու բավականաչափ սերտ կապեր խառը բնակչության պատճառով, խառը ամուսնությունները, ընդհանուր մշակութային տարածության էլեմենտների, լեզվական արգելքների բացակայության, մարդկանց ազատ տեղափոխության, հետաքրքրությունների մեջ և այլն:
- Տեխնոլոգիական փոխկապակցվածության, միասնական տեխնիկական նորմերով:

Սակայն ինտեգրացիոն պրոցեսները հանդիպում են նաև հակառակ միտումների, պայմանավորված, նախ և առաջ, նախկին խորհրդային հանրապետություններում ամրապնդելու վերջերս ստացած ինքնավարությունը կառավարող շրջանների ձգտումով, ամրապնդելու իրենց պետականությունը: Դա դիտվում էր նրանց կողմից որպես պարտադիր առաջնություն, և տնտեսական նպատակահարմարության նկատառումները հետ էին մղվում երկրորդ պլան, որովհետև ինտեգրացիոն միջոցառումները

ընկալվում էին որպես ինքնավարության սահմանափակում: Սակայն ցանկացած ինտեգրացիա, նույնիսկ ամենաչափավորը, ենթադրում է ինչ-որ իրավունքների հանձնում ինտեգրացիոն միավորման միասնական մարմիններին, այսինքն որոշակի երկրամասերում ինքնավարության կամավոր սահմանափակում: Արևմուտքը, դժկամությամբ դիմավորելով ցանկացած ինտեգրացիոն պրոցեսները հետխորհրդային տարածքում և դիտելով նրանց որպես «ԽՍՀՄ-ի վերաստեղծման» փորձեր, սկզբում թաքնված, իսկ այնուհետ և բացահայտ, սկսեց ակտիվորեն հակազդել նրանց ինտեգրացիային՝ նրա բոլոր ձևերում: Հաշվի առնելով ԱՊՀ անդամ-երկրների աճող ֆինանսական և քաղաքական կախվածությունը Արևմուտքից, դա չէր կարող չարգելել ինտեգրացիոն պրոցեսները:

ԱՊՀ երկրների շրջանակներում (հատկապես ԽՍՀՄ-ի քայքայումից հետո առաջին տարիներին) ինտեգրացիայի նկատմամբ իրական դիրքորոշման համար ոչ սակավ նշանակություն ունեին Արևմուտքից օգնություն ստանալու նկատմամբ հաշվարկներն այդ դեպքում, եթե այս երկրները չեն «շտապի» ինտեգրացիայի միմյանց հետ: Պատշաճ չափով գործընկերների հետաքրքրությունները հաշվի առնելու չկամեցողությունը, այդքան հաճախ հանդիպող նոր պետությունների քաղաքականության մեջ, դիրքորոշման ոչ ճկունությունը, նույնպես չաջակցեցին պայմանավորվածությունների հասնելու և նրանց գործնական իրականացմանը:

Նախկին խորհրդային հանրապետությունների ինտեգրացիային պատրաստակամությունը տարբեր էր, որը որոշվում էր ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական և նույնիսկ էթնիկական գործոններով: Ամենասկզբից մերձբալթյան երկրները դեմ էին ԱՊՀ-ի կառուցվածքներում որևիցէ մասնակցությանը: Նրանց համար Ռուսաստանից և իրենց անցյալից հեռավորություն պահպանելու ձգտումը հնարավոր է հետագայում իրենց ինքնավարությունը ամրապնդելու և «Եվրոպա մտնելու» նպատակով եղել է գերակշռող, չնայած ԱՊՀ-ի անդամ-երկրների հետ տնտեսական կապերի զարգացման և պահպանման մեջ շահագրգռվածությանը: Ինտեգրացիայի նկատմամբ զսպված հարաբերությունները ԱՊՀ-ի շրջանակներում նկատվում էր Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքմենիայի և Ուզբեկստանի

կողմից, ավելի դրական՝ Բելոռուսիայի, Հայաստանի, Կիրգիզիայի և Ղազախստանի կողմից:

Այդ պատճառով, նրանցից շատերը ԱՊՀ-ն դիտում էին նախ և առաջ որպես «քաղաքակիրթ բաժանման» մեխանիզմ, ձգտելով իրականացնել այն և այդպիսով ամրապնդել սեփական պետականությունը, որպեսզի փոքրագույնի հասցնեին կազմավորված կապերի խանգարումներից, խզումներից անխուսափելի կորուստները և խուսափեին առճակատումներից: Երկրների իրական մոտեցման խնդիրը հեռացվեց երկրորդ պլան: Այստեղից էլ ընդունված որոշումների անվանդաբար խրոնիկ կատարումը: Մի շարք երկրներ փորձում էին օգտագործել ինտեգրացիոն խմբավորման մեխանիզմը իրենց երկրներում քաղաքական անջատվողականության դեմ պայքարելու համար, նրանք ձգտում էին ԱՊՀ-ի միջոցով հաստատել Աբխազիայի տնտեսական և քաղաքական շրջափակումը: Ադրբեջանը նմանապես վարվում էր Ղարաբաղի հարցում, թե Հայաստանի հետ իր հարաբերություն-ների կարգավորման, և թե ԱՊՀ-ում նրա մասնակցության աստիճանի չափով:

Անկախ պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծման մասին որոշումը ընդունվել է Ռուսաստանի, Բելոռուսիայի և Ուկրաինայի նախագահ-ների կողմից, միաժամանակ 1991թ. վերջին ԽՍՀՄ-ի արձակման, գոյության դադարեցման մասին Բելովեժեի համաձայնագրի ստորագրման հետ: Հետա-գայում ԱՊՀ-ին միացան բոլոր նախկին խորհրդային հանրապետությունները, բացի մերձբալթյան երկրներից: Կանոնադրության մեջ որոշված են Համագոր-ծակցության նպատակները՝ օժանդակել ԱՊՀ-ի անդամներին ինտեգրացիայի տնտեսական, քաղաքական և մարդասիրական ոլորտներում, աջակցել և զարգացնել մարդկանց, պետական ինստիտուտների և Համագործակցության երկրների ձեռնարկությունների միջև շփումները և համագործակցությունը: ԱՊՀ-ն՝ բաց կազմակերպություն է այլ երկրների միացման համար:

ԱՊՀ-Ի ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1992-ից մինչև 2000 թվականները ԱՊՀ-ի մարմիններում համագոր-ծակցության ամենատարբեր ոլորտներում ընդունվել էր մոտ հազարից ավել համատեղ որոշումներ:

Նրանց մեծ մասը «մնացել էր թղթի վրա»՝ իր ինքնավարության որևէ սահմանափակման գնալու չկամեցողությունից, առանց որի իրական ինտեգրացիան անհնարին է կամ ունի ծայրահեղ նեղ շրջանակներ: Հայտնի դեր խաղաց և ինտեգրացիոն մեխանիզմի բյուրոկրատական բնույթը, նրանում հսկողական ֆունկցիաների բացակայությունը: Առայժմ ոչ մի խոշոր որոշում (տնտեսական միության ստեղծման, ազատ առևտրի գոտու, վճարունակ միության մասին) կատարված չի եղել: Այս համաձայնագրերի միայն առանձին բաժիններում են ձեռք բերվել առաջընթացներ:

ԱՊՀ-ի ոչ արդյունավետ աշխատանքի քննադատությունը հատկապես լսելի դարձավ վերջին երկու-երեք տարիներին: Քննադատների մի մասը ընդհանրապես կասկածում էր ԱՊՀ-ի հենց ինտեգրացիայի գաղափարի կենսունակության մեջ, իսկ մի մասը այս անարդյունավետության պատճառը տեսնում էր բյուրոկրատիզմի, ծանրաշարժության և ինտեգրացիոն մեխանիզմի անհետաձգելիության մեջ:

Հաջող ինտեգրացիայի համար գլխավոր արգելք էր հանդիսանում ինտեգրացիոն գործողությունների հաջողությունը և նրանում համաձայնեցված նպատակների բացակայությունը, ինչպես նաև առաջադիմության հասնելու համար քաղաքական կամքի անբավարարությունը: Դեռ չեն վերացել նոր պետությունների ղեկավար շրջանակներում Ռուսաստանից հեռավորություն պահելու և ԱՊՀ-ի շրջանակներում ինտեգրացիայից շահույթների ստացման հաշվարկները:

Ամեն դեպքում, չնայած բոլոր կասկածներին և քննադատություններին, կազմակերպությունը պահել է իր գոյությունը, քանի որ այն հարկավոր է ԱՊՀ-ի անդամ-երկրների մեծամասնությանը: Չպետք է հաշվից դուրս նետել և այս պետությունների բնակչության լայն շերտերի միջև տարածված հույսերն այն բանի վերաբերյալ, որ փոխադարձ համագործակցության ակտիվացումը կօգնի լուրջ դժվարությունների հաղթահարմանը, որի հետ բախվում էին բոլոր հետխորհրդային հանրապետությունները՝ սոցիալ-տնտեսական համակարգերի և իրենց պետականության ամրապնդման վերաստեղծման ընթացքում: Դարավոր մշակութային կապերը նույնպես մղում էին փոխադարձ կապերի պահպանմանը:

Համաշխարհային տնտեսության զարգացման միտումները առաջիկա տասնամյակներում բնորոշվելու են տարածաշրջանային և տեղական շուկաների սահմանափակմամբ, նրանցում մրցակցության կոշտացմամբ, ինչպես նաև այլ տարածաշրջանների տնտեսական միությունների հետ ինտեգրացիոն գործընթացների սահմանափակմամբ: Այս առումով, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը նրանց հետագա ինտեգրացիայի տեսակետից նույնպես, ԱՊՀ երկրների ավելի սերտ ինտեգրացիան, նրանց հետագա խորացումը և արտադրողական ուժերի զարգացումը՝ այդ ճանապարհին նրանց առաջին կարևորագույն միջոցառումներն են:

ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՈՐՈՇ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

Խորհրդային միության նախկին տարածքում տնտեսական ինտեգրացիայի փոխարեն, ապաշուկայական մեթոդներով, աստիճանաբար, ծայրահեղ ցավագին, իսկ երբեմն էլ ոչ միշտ արդյունավետորեն իրականացվող, սկսվում է շուկային անցման պայմաններում համագործակցության ընդունելի ձևերի փնտրումը: ԱՊՀ երկրների առաջ կանգնած է տնտեսական միության նոր մոդելի մշակման և իրականացման խնդիրը, որը կպատասխաներ նրանց երկարաժամկետ հետաքրքրություններին:

ԱՊՀ երկրները նախկին ԽՍՀՄ-ից ժառանգություն են ստացել մի ամբողջ շարք նման համակարգային կապեր, որոնք օբյեկտիվորեն մղում են նրանց, բայց արդեն նոր պայմաններում, մի ամբողջ «ինտեգրացիոն շերտի» վերականգնման: Խոսքը գնում է միացյալ էներգետիկ համակարգի, տրանսպորտի, կապի հեռահաղորդակցության, նավթի և գազատարների, ստանդարտների և այլնի միացյալ համակարգի մասին: Այդ ամենը ստեղծում է ավելի շատ ինտեգրացված և փոխկապակցված տնտեսական տարածություն, քան այն, որը հասել են ԵՄ-ում (չնայած, որ անհետացել են որոշ կարևոր բաղկացուցիչ ինտեգրացիոն համակարգեր, օրինակ Վճարունակ միությունը, միացյալ տարադրամը և այլն): Ռուս տնտեսագետների գնահատմամբ, ԽՍՀՄ-ի ՀՆԱ-ի հանրագումարում միջհանրապետական փոխանակումը 1990 թ-ին կազմել է 20.5%, Եվրոպական Միության 16%-ի դիմաց: Չնայած նրան, որ այդ միացյալ

տարածությունը ձևավորվել է արտաշուկայական սկզբունքների վրա, այնուամենայնիվ, կազմավորվեց ամբողջական, բոլոր հետխորհրդային միությունների համար կենսականորեն կարևոր տնտեսական մեխանիզմ: Նախկին Միության տնտեսական տարածության բռնի մասնատումը, ելնելով վարվող քաղաքականության առաջնությունից, չհաստատված համապատասխան տնտեսական հաշվարկներով, որոնք կապացուցեին տնտեսական կապերի խզման անհրաժեշտությունը, որի արդյունքում յուրաքանչյուր հանրապետության զարգացման մակարդակը արագ պետք է աճեին, ընդհակառակը, բերեց մեծագույն ծախսերի և հանդիսանում է ԱՊՀ բոլոր երկրներում սուր տնտեսական ճգնաժամերի պատճառներից մեկը:

ԱՊՀ-ի զարգացման ներկա էտապում, համագործակցության ստեղծումից 10 տարի անց կարելի է ասել, որ մերձեցման, ինտեգրացիոն պրոցեսների զարգացման պլանում, կենտրոնաձիգ ուժերը բոլորովին էլ չեն գերակշռում կենտրոնախույս ուժերին:

Գոյություն ունեն այդ պրեցեսն արգելակող, լիովին կողմնորոշված քաղաքական և տնտեսական մոտիվներ, գործոններ: Ինտեգրացիոն պրոցեսների զարգացումը արգելակող գործոն է հանդիսանում քաղաքականությունը: Քաղաքական և ազգայնական ամբիցիաները թույլ չեն տալիս ստեղծել ԱՊՀ անդամ-երկրների տնտեսական օպերատորների համար առավել բարենպաստ պայմաններ (տնտեսական, իրավական, ինֆորմացիոն և այլն): Ինչպես հայտնի է, ինտեգրացիոն մերձեցման համար գլխավոր օղակը հանդիսանում է միկրոմակարդակը, շահագրգիռ ձեռնարկությունների միջև համագործակցությունը և կոոպերացիան, որոնք նախկին Միության տարածքում հազարավոր էին:

Սակայն ԱՊՀ-ի տարածքում տվյալ գործոնը բոլորովին էլ գերակշռողը չէ: Մեծամասամբ այն պատճառով, որ ընդունված չեն քաղաքական բնույթի որոշումներ, իսկ եթե ընդունված էլ են, ապա «չեն աշխատում»: Այսպես, չնայած և 1993 թ. սեպտեմբերին ստորագրվել էր Տնտեսական միության ստեղծման մասին շրջանակային պայմանագիր, որը բացը էր ԱՊՀ յուրաքանչյուր երկրի անդամակցության համար, ձեռնարկվում էին վճարային միության իրական ստեղծման փորձեր, սակայն առաջադրված խնդիրների

կատարումը արգելվում էր հատկապես քաղաքական գործիչների կողմից: Ինտեգրացիոն մեխանիզմի ստեղծումը առաջնահերթային խնդիր է հանդիսանում: Սկզբունքորեն այն պետք է ներառի ֆինանսական, բանկային և տարադրամային միասնական համակարգերը, իրավաբանորեն ճշգրտված միջպետական համաձայնագրերի փաթեթը և վերազգային ինստիտուտները, որոնք պետք է կարգավորեին արտաքին առևտրային ներտնտեսական քաղաքականությունը:

Ինտեգրացիոն պրոցեսների զարգացմանը չուղեկցող տնտեսական բնույթի գործոններին կարելի է դասել հետևյալները: Ինտեգրացիայի գլխավոր էլեմենտներից մեկը հանդիսանում է մաքսային խոչընդոտների աստիճանական նվազումը, համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և բանվորական ուժի ազատ տեղաշարժի ազատության համար պայմանների ապահովումը: Սակայն այժմ ԱՊՀ տարածքում տեղի են ունենում միանգամայն հակառակ պրոցեսներ՝ ստեղծվում մաքսային կետեր, մտցվում են քվոտաներ, փոխադարձ առևտրի լիցենզավորում և այլն: Տվյալ իրավիճակն առաջ է եկել նաև այնպիսի տնտեսական պատճառների հետևանքով, ինչպես դեպի շուկայական հարաբերություններ տարբեր արագություններով շարժը, տնտեսական ռեֆորմների անցկացման բնույթի մեջ տարբերությունները, հումքով, պարենային ռեսուրսներով, որակյալ կադրերով ապահովվածության տարբեր աստիճանները: Նախկին միութենական հանրապետություններում էականորեն տարբերվում են գների ազատականացման մասշտաբներն ու բնույթը, ինքը՝ գնի մակարդակը, որը ծնում է ռեսուրսների տատանումներ, և որպես հակազդեցություն, մաքսային և այլ խոչընդոտների առաջացում:

Չնայած այսօրվա ստեղծված իրավիճակին, աստիճանաբար ի հայտ են գալիս որոշ ԱՊՀ անդամ-երկրների որոշակի կենտրոնամետության նշաններ: Ռուսաստանի, Բելոռուսիայի, Ղազախստանի և Կիրգիզիայի միջև ստորագրվել են մաքսային հարցերի վերաբերյալ փաստաթղթեր, Միջին ասիական հանրապետությունները հանդես են եկել լուրջ մտադրություններով՝ ստեղծելու կենսունակ միավորող կառույց: Տվյալ պրոցեսները հարկավոր չէ դիտել որպես ինտեգրացիային խոչընդոտող պրոցեսներ, այլ ավելի շուտ նրան

տալիս է բազմապլանության և բազմակողմանի ընդգծվածություն:

Կասկած չկա, որ տվյալ փուլում ԱՊՀ տարածքում տնտեսական համագործակցությունը պետք է իրականացվի առանց վերազգային ինստիտուտի օգտին ինքնավարությունից հրաժարվելու, քանզի խոսքը գնում է տարբեր տնտեսական զարգացում, վառ արտահայտված ազգային պրոբլեմներ ունեցող մեծ քանակությամբ գործընկրների մասին: ԱՊՀ երկրների տնտեսական օպերատորների փոխհամագործակցելու պատրաստականությունը կառավարությունների առաջ օբյեկտիվորեն կդնի տնտեսական կապերի զարգացման շարժունակ և իրական արդյունք ապահովող քաղաքական խնդիր:

Ամենևին պատահական չէր այդ պատճառով 2000 թ-ի օգոստոսին Յալթայի գագաթաժողովում ԱՊՀ երկրների ինտեգրացիայի ընթացքի մասին խնդիրների սուր և տհաճ քննարկումը, որն ունի մեկ նպատակ՝ առավել արդյունավետ դարձնել այդ կառույցի գոյությունը և ստեղծել մինչ այդ ստորագրված համատեղ փաստաթղթերի, պայմանագրերի իրագործման համապատասխան քաղաքական, տնտեսական և իրավական դաշտ և պայմաններ:

Հայտնի իրողություն է նաև, որ ռուսական քաղաքական և տնտեսական լծակները տիրապետող շրջանակների իրական ցանկությունից է կախված ԱՊՀ երկրների տնտեսական ինտեգրացիայի արդյունավետության աստիճանը, ապագան ընդհանրապես: Քանի դեռ ռուսական քաղաքական վերնախավը կողմնորոշված է դեպի այլ արժեքները, որոնք շատ հաճախ չեն համապատասխանում Ռուսաստանի ժողովուրդների իրական շահերին, ԱՊՀ երկրների տնտեսական ինտեգրացիան կկրի ձևական բնույթ, չի կարող լիարժեքորեն նպաստել տարածաշրջանային երկրների շուկաների և արտադրողական ուժերի զարգացմանը: Ելքը այն կլիներ, որ Ռուսաստանում, ինչպես նաև ԱՊՀ մի շարք այլ երկրներում իշխող քաղաքական վերնախավը ձեռբազատվեր օտարածին «արժեքների» սպասարկման գործընթացներից և իրականացնել ԱՊՀ երկրների ժողովուրդների ընդհանուր շահերին համապատասխան տնտեսական քաղաքականություն՝ իմա ԱՊՀ երկրների նախկին խորհրդային ընդհանուր տնտեսական շուկայի ձևավորումը: